ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ԱՋԱԿՑՈՂ ՑԱՆՑԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Աջակցող ցանցի 1-ին համագումարը (այսուհետ՝ Համագումար) տեղի ունեցավ «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնի «Էրեբունի» սրահում 2016 թվականի օգոստոսի 2-ին ժամը 11:00-ին:

Համագումարի օրակարգ՝

1. **11:00-11:15** Մասնակիցների գրանցում:
2. **11:15 – 11:25** Համագումարի պաշտոնական բացում՝ ողջույնի խոսք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյան:
3. **11:25 - 11:30** Համագումարի նախագահության կազմի հաստատում:
4. **11:30-11:35** Պատվիրակների մանդատների և համագումարի քվորումի հաստատում:
5. **11:35-11:45** Համագումարի օրակարգի հաստատում և վարման կարգի հստակեցում:
6. **11:45-11:55** Համագումարի աշխատակարգի ներկայացում և հաստատում:
7. **11:55-12:00** Համակարգող խորհրդի անդամների թվաքանակի որոշում:
8. **12:00-12:10** Համակարգող խորհրդի ընտրության հաշվիչ հանձնաժողովի ընտրություն:
9. **12:10-12:20** Համակարգող խորհրդի անդամների թեկնածուների առաջադրում:
10. **12:20-13:00** Առաջադրված թեկնածուների կողմից իրենց կազմակերպության գործունեության և համակարգող խորհրդում իրենց անելիքների վերաբերյալ համառոտ ներկայացում:
11. **13:00 – 13:30** Համակարգող խորհրդի ընտրություն և կազմի հաստատում:
12. **13:30-13:40** Համագումարի փակում:
13. **13:40-14:00** Հյուրասիրություն

1. **Մասնակիցների գրանցում:**
   Համագումարի քարտուղարությունն իրականացրեց մասնակիցների գրանցում՝ 39-ը պատվիրակներից ներկա էին 32-ը:

2. **Համագումարի պաշտոնական բացում:**
   Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Լիազոր մարմնի (ԼՄ) ներկայացուցիչ պարոն Արտեմ Ասատրյանը: Նա մասնավորապես կարևորեց սոցիալական պաշտպանության ոլորտում համատեղ գործունեությունը, ինչի արդյունքում ապահովվում է յուրաքանչյուր ընտանիքի գնահատված կարիքի հիման վրա հասցեական ու ճշգրիտ սոցիալական քաղաքականության ու սոցիալական ծրագրերի իրականացումը: Նախարարը միաժամանակ հավելեց, որ այն կառուցակարգերը, որոնց հիմքերը դրվել են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, գործելու պարագայում կապահովեն ծրագրերի շատ ավելի բարձր հասցեականություն: Ըստ նրա ազգային մակարդակում Աջակցող ցանցի ստեղծումը առաջին քայլն է, որպեսզի սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող աշխատանքները համակարգվեն բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից: Ըստ նախարարի այս կառույցը լինելու է աշխատող մարմին և սոցիալական ոլորտում ստանձնելու է կարևորագույն առաքելություն:

3. Համագումարի նախագահության կազմի հաստատում:

ԼՄ ներկայացուցիչ Արտեմ Ասատրյանը առաջարկեց, որ նախագահության կազմի ձևավորման համար առաջադրեն թեկնածուներ պատվիրակներից:

Առաջադրվեիցն 3 թեկնածուներ՝ Միրա Անտոնյան, Արմեն Ալավերդյան և Տիգրան Պետրոսյան:

ԼՄ ներկայացուցիչն առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել նախագահության կազմը: Քվեարկության արդյունքում 32 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, հաստատվեց Համագումարի նախագահության կազմը՝ Մ.Անտոնյան, Ա. Ալավերդյան, Տ. Պետրոսյան և ԼՄ ներկայացուցիչ Ա. Ասատրյան: Նախագահության կազմը լիազորեց Ա. Ասատրյանին վարել Համագումարի աշխատանքները:

4. Պատվիրակների մանդատների և Համագումարի քվորումի հաստատում:

ԼՄ ներկայացուցիչը, ստանալով Համագումարի քարտուղարության կողմից արձանագրված պատվիրակների ցուցակը, ներկայացրեց, որ Համագումարին մասնակցում են 39 պատվիրակներից 32-ը և համաձայն Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրում նշված քվորումի (50+1) Համագումարը հայտարարվում է վավեր և Համագումարը կարող է շարունակել աշխատանքները:

5. Համագումարի օրակարգի հաստատում և վարման կարգի հստակեցում:

Ա) ԼՄ ներկայացուցիչ Ա. Ասատրյանը ներկայացրեց Համագումարի օրակարգը և առաջարկեց, եթե օրակարգի հետ կապված կան այլ առաջարկություններ, պատվիրակները թող ներկայացնեն, իսկ եթե ոչ, ապա օրակարգը հաստատեն: Միաժամանակ նա առաջարկեց օրակարգի 8-րդ կետը՝ «Համակարգող խորհրդի ընտրության հաշվիչ հանձնաժողովի ընտրություն»՝ դնել 6-րդ կետից առաջ, որպեսզի հաշվիչ հանձնաժողովն արդեն իսկ սկսի իր աշխատանքները: Առաջարկությունն ընդունվեց:

ԼՄ ներկայացուցիչ Ա. Ասատրյանն Համագումարի օրակարգի նախագիծը դրեց քվեարկության, որը հաստատվեց միաձայն ՝32 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Բ) Վարման կարգի վերաբերյալ Համագումարի նախագահ Ա. Ասատրյանն առաջարկեց 3-ական րոպե սահմանել առաջարկություններ ներկայացնելու և 5-ական րոպե՝ ելույթ ունեցողների համար: Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

6. Համակարգող խորհրդի ընտրության հաշվիչ հանձնաժողովի ընտրություն:

Համագումարի նախագահ Ա. Ասատրյանն առաջարկեց Համագումարի պատվիրակներին թեկնածուներ առաջարկել Հաշվիչ հանձնաժողովի ձևավորման համար:

Առաջադրվեցին 3 թեկնածուներ՝ Աիդա Մուրադյան, Լուսինե Սիմոնյան և Լուսինե Խաչատրյան:

Քվեարկության արդյունքում Կողմ 32, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝0 հաստատվեց հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ Աիդա Մուրադյան, Լուսինե Սիմոնյան և Լուսինե Խաչատրյան:

7. Համագումարի աշխատակարգի ներկայացում և հաստատում:

ԼՄ ներկայացուցիչը ելույթի համար ձայն տվեց հրավիրյալ Ա. Սավգուլյանին ներկայացնելու Համագումարի աշխատակարգի նախագիծը: Ա. Սավգուլյանը ներկայացրեց աշխատակարգը: Նա նշեց նաև, որ նախագիծը նախապես ուղարկվել է պատվիրակներին և նրանց կողմից արված դիտարկումները հիմնականում տեղ են գտել նախագծում: Համագումարի նախագահողն առաջարկեց, որ եթե աշխատակարգի վերաբերյալ կան հարցեր, դիտողություններ կամ առաջարկություններ, ապա ելույթ ունեցողները կարող են ցանկագրվել:

Հարցերի համար ցանկագրվեցին նախագահության անդամ Ա. Ալավերդյանը և պատվիրակ Թամարա Աբրահամյանը:

Ա. Ալավերդյանը նշեց, որ եթե ընտրողը հաշմանդամություն ունեցող է և չի կարող ինքը քվեարկել, ապա աշխատակարգը ինչպե՞ս է լուծում այդ հարցը, իսկ Թամարա Աբրահամյանն ասաց, որ Համագումարի հրավիրման ժամկետների վերաբերյալ ոչինչ գրված չէ: Հրավիրյալ Ա. Սավգուլյանն ի պատասխան Ա. Ալավերդյանի հարցին ասաց, որ աշխատակարգում առանձին կետով կսահմանվի, որ հաշմանդամություն ունեցողները կարող են քվեարկել ուղեկցողի աջակցությամբ, իսկ Թամարա Աբրահամյանի հարցին պատասխանեց, որ Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրում (այսուհետ՝ համաձայնագիր) արդեն նախատեսվում է տարին 2 անգամ հրավիրել համագումար, և եթե կա անհրաժեշտություն, ապա աշխատակարգում ևս այդ կետը կավելացվի:

Համագումարի նախագահողի կողմից Համագումարի աշխատակարգի նախագիծը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում Կողմ 32, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0, Համագումարն ընդունեց աշխատակարգը: Համագումարի աշխատակարգը տե՛ս Հավելված 1-ում:

8. **Համակարգող խորհրդի թվաքանակի որոշում:**

Համագումարի նախագահողն աառաջարկեց, որ պատվիրակները ներկայացնեն առաջարկություններ համակարգող խորհրդի թվաքանակի վերաբերյալ: Նախագահողը նշեց, որ անդամների քանակը ըստ Համաձայնագրի չպետք է լինի 5-անձից պակաս: Միաժամանակ նա պատվիրակներին հիշեցրեց, որ համակարգող

խորհրդի կազմում պետք է ընդգրկված լինի նաև Լիազոր մարմնից 1 ներկայացուցիչ, որը ըստ համաձայնագրի չի ընտրվելու, այսինքն՝ թվաքանակի առաջարկություն կատարելիս պետք է հաշվի առնել նաև այս գործոնը:

Ելույթների համար ցանկագրվեցին պատվիրակներ Նաիրա Առաքելյանը, Մարտին Սարգսյանը, Թամարա Աբրահամյանը, Միրա Անտոնյանը:

Նաիրա Առաքելյանը առաջարկեց, որ համակարգող խորհուրդը բաղկացած լինի 9-ը անդամից, Թամարա Աբրահամյանը երկրորդեց այդ առաջարկությունը: Միրա Անտոնյանն առաջարկեց 7 հոգանոց կազմ, վերջինիս երկրորդեց Մարտին Սարգսյանը: Փաստորեն եղավ 2 առաջարկություն:

Քվերակության դրվեց առաջին առաջարկությունը «Ովքե՞ր են կողմ, որ համակարգող խորհուրդը բաղկացած լինի 9-ը անդամից»: Քվերակության արդյունքներ՝ Կողմ 8, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 6, (1 հոգի չմասնակցեց քվերակությանը):

Քվեարկության դրվեց 2-րդ առաջարկությունը. «Ովքե՞ր են կողմ, որ համակարգող խորհրդի թվաքանակը լինի 7»: Քվեարկության արդյունքներ Կողմ՝ 17, Ձեռնպահ՝ 3, Դեմ՝ 8 (4 հոգի չմասնակցեց քվեարկությանը):

Քվերակության արդյուքնում ընդունվեց 2-րդ առաջարկությունը: Համակարգող խորհուրդը պետք է բաղկացած լինի 7 հոգուց:

8. Համակարգող խորհրդի թեկնածուների առաջադրում:

Համագումարի նախագահն ասաց, որ համաձայն օրակարգի հաջորդ կետի պետք է պատվիրակներն առաջադրեն թեկնածուներ համակարգող խորհրդի ձևավորման համար: Պատվիրակներն առաջադրեցին 13 թեկնածուներ.

1. **Արփինե Աբրահամյան**
2. **Լուսինե Խաչատրյան**
3. **Սուրեն Մաղաքյան**
4. **Միրա Անտոնյան**
5. **Թամարա Աբրահամյան**
6. **Լուսինե Քոչարյան**
7. **Արմեն Ալավերդյան**
8. **Նաիրա Առաքելյան**
9. **Նարեկ Սարգսյան**

10. **Շուշանիկ Սահակյան**
11. **Տաթևիկ Ղարիբյան**
12. **Սուսաննա Թադևոսյան**
13. **Տիգրան Պետրոսյան**

Սուսաննա Թադևոսյանը և Տիգրան Պետրոսյանը հանդես եկան ինքնաբացարկով և դուրս եկան առաջադրվողների ցուցակից: Պատվիրակ Մարտին Սարգսյանն առաջարկեց ցանկը սահմանափակել: Համագումարի նախագահն ասաց, եթե չկան այլ առաջադրումներ, ապա առաջադրված թեկնածուները համաձայն օրակարգի հաջորդ կետի ըստ առաջադրման հերթականության կարող են ամբիոնի մոտից ներկայացնել իրենց կազմակերպությունները և խոսել համակարգող խորհրդում իրենց անելիքների մասին: Յուրաքանչյուր ելույթ ունեցողին տրամադրվեց 5 րոպե ժամանակ:

9. **Առաջադրված թեկնածուների կողմից իրենց կազմակերպության գործունեության և համակարգող խորհրդում իրենց անելիքների վերաբերյալ համառոտ ներկայացում:**

Առաջադրված թեկնածուները համառոտ ներկայացրեցին իրենց կազմակերպության պատմությունն ու ապագա անելիքները համակարգող խորհրդում: Նրանք հայտնեցին իրենց պատրաստակամությունն աշխատելու այս կառույցի շրջանակներում սոցիալական տարբեր ծրագրերի իրականացման շուրջ:

10. Համակարգող խորհրդի ընտրություն և կազմի հաստատում:

Համագումարի նախագահող Ա. Ասատրյանն ասաց, որ քվեարկությունը կարող է անցկացվել բաց կամ փակ և դիմեց պատվիրակներին, որպեսզի նրանք իրենց տեսակետներն արտահայտեն այս հարցի շուրջ: Պատվիրակներից մեկն առաջարկեց կազմակերպել բաց քվեարկություն, իսկ հիմնական մասը՝ փակ: Որոշվեց իրականացնել փակ քվեարկություն՝ Կողմ՝ 30 , Դեմ՝ 1, Ձեռնպահ՝ 1:

Համագումարի նախագահ Ա. Ասատրյանն առաջարկեց հաշվիչ հանձնաժողովին իրականացնել քվեաթերթիկների պատրաստման աշխատանքները և առաջարկեց համագումարի մասնակիցներին ևս մեկ անգամ հիշեցնել քվեարկության կարգը: Հաշվիչ հանձնաժողովի ներկայացուցիչ Աիդա Մուրադյանն ասաց, որ քվեաթերթիկում առկա է 11 թեկնածու և յուրաքանչյուր պատվիրակ պետք է քվեարկի մինչև 6 թեկնածուի դիմաց դնելով համապատասխան նշանը՝ V, եթե

քվեաթերթիկում կլինի քվեարկած 6-ից ավելի թեկնածուի դիմաց, ապա այն կճանաչվի անվավեր: Համագումարի նախագահողը հայտարարեց ընդմիջում և առաջարկեց, որ այն անձինք, որոնք չեն մասնակցելու քվեարկությանը կարող են հարևան սրահում մասնակցել հյուրասիրության:

Քվեարկության գործընթաց. Հաշվիչ հանձնաժողովը տպագրեց և ստորագրությամբ վավերացրեց 32 քվեաթերթիկ: Քվեաթերթիկները մեկ առ մեկ տրվեցին պատվիրակներին: Քվեաթերթիկները լցվեցին ընտրության համար նախատեսված թափանցիկ տուփում: Հաշվիչ հանձնաժողովը արձանագրեց քվեարկության ավարտը և բացեց քվեատուփը, որի մեջ առկա էր 28 քվեաթերթիկ: Քվեաթերթիկների քանակը համապատասխանեց Հաշվիչ հանձնաժողովի կողմից պատվիրակներին տրված քվեաթերթիկների քանակին: Պատվիրակներից 4-ը չէին մասնակցել քվեարկությանը: Հաշվիչ հանձնաժողովը հրավիրեց մասնակիցներին դահլիճ: Համագումարի նախագահողն առաջարկեց, որ հաշվիչ հանձնաժողովը ներկայացնի քվեարկության արդյունքները:

Հաշվիչ հանձնաժողովի ներկայացուցիչ Աիդա Մուրադյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները: 32 պատվիրակներից քվեարկությանը մասնակցել էին 28-ը, որոնց քվեարկության արդյունքում ձայները բաշխվել էին հետևյալ կերպ.

1. Սուրեն Մաղաքյան – 25 ձայն («Լիարժեք կյանք» ՀԿ)
2. Լուսինե Քոչարյան – 20 ձայն («Հայկական կարմիր խաչի ընկերություն»)
3. Արմեն Ալավերդյան – 18 ձայն («Ունիսոն» ՀԿ)
4. Միրա Անտոնյան – 16 ձայն («Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիա»)
5. Նաիրա Առաքելյան – 16 ձայն («Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ)
6. Արփինե Աբրահամյան – 15 ձայն («Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն»)
7. Տաթևիկ Ղարիբյան – 15 ձայն («Երեխաների պաշտպանության ցանց»)
8. Լուսինե Խաչատրյան – 12 ձայն («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ»)
9. Նարեկ Սարգսյան – 12 ձայն («Լոռու մարզպետարանի աշխատակազմ»)
10. Շուշանիկ Սահակյան – 7 ձայն («Նռան հատիկ»)
11. Թամարա Աբրահամյան – 6 ձայն («ԱՐԱԶԱ» ՀԲԿ)

Հաշվիչ հանձնաժողովի պատասխանատուն նշեց, որ քվեարկության առաջին փուլում Համակարգող խորհրդի կազմում ընդգրկվել են Սուրեն Մաղաքյանը,

Լուսինե Քոչարյանը, Արմեն Ալավերդյանը, Միրա Անտոնյանը, Նաիրա Առաքելյանը, այսինքն՝ 5 հոգի: Հաշվիչ հանձնաժողովն առաջարկեց, որ Համագումարն արդեն պետք է որոշի հաջորդիվ ինչ անել, որովհետև համաձայն կարգի 15-ական ձայն հավաքած Արփինե Աբրահամյանի և Տաթևիկ Ղարիբյանի համար պետք է կազմակերպի ընտրության 2-րդ փուլ:
Համագումարի նախագահողն առաջարկեց ցանկագրվել ելույթների համար:
Ծավալվեց քննարկում. Պատվիրակ Նաիրա Առաքելյանն առաջարկեց վերանայել համակարգող խորհրդի թվաքանակի հարցը, այն դարձնել 9-ը հոգանոց, որում կընդգրկվեն առաջին 7 ընտրվածները, իսկ Լիազոր մարմինը կունենա 2 ներկայացուցիչ: Պատվիրակներից մեկն առաջարկեց, որ մարմինը բաղկացած լինի 8 հոգուց: Հրավիրյալ Արայիկ Պետրոսյանն ասաց, որ այդ դեպքում թիվը զույգ է լինում և որոշումների ընդունման դիտանկյունից խնդրահարույց է: Քննարկման ժամանակ Ա. Աբրահամյանն հանդես եկավ ինքնաբացարկով, սակայն որոշ պատվիրակներ դեմ արտահայտվեցին նրա ինքնաբացարկին: Համագումարի նախագահողն առաջարկեց Համագումարին վերանայել համակարգող խորհրդի կազմի թվաքանակը և 7-ի փոխարեն սահմանել 8 հոգի՝ ներառյալ նաև լիազոր մարմնի ներկայացուցիչը:
Քվեարկության դրվեց համակարգող խորհրդի թվակազմը 8 հոգի սահմանելու և նախորդ որոշումը չեղյալ հայտարարելու մասին առաջարկությունը:
Քվեարկության արդյունքում Կողմ 17, Դեմ 7, Ձեռնպահ 4, որոշվեց, որ Համակարգող խորհրդի կազմը պետք է բաղկացած լինի 8 հոգուց:

Համագումարը հաստատեց Համակարգող խորհրդի կազմը, որի կազմում ընդգրկվեցին 7 պատվիրակ կազմակերպություններից, ինչպես նաև ըստ Համաձայնագրի ԼՄ ներկայացուցիչը.

1. Արտեմ Ասատրյան (Լիազոր մարմին)
2. Սուրեն Մաղաքյան – 25 ձայն
3. Լուսինե Քոչարյան – 20 ձայն
4. Արմեն Ալավերդյան – 18 ձայն
5. Միրա Անտոնյան – 16 ձայն
6. Նաիրա Առաքելյան – 16 ձայն

7. Արփինե Աբրահամյան – 15 ձայն
8. Տաթևիկ Ղարիբյան – 15 ձայն

11. Համագումարի փակում

Համագումարի նախագահող Ա. Ասատրյանը մաղթեց բեղմնավոր գործունեություն Աջակցող ցանցի համակարգող խորհրդին և ասաց, որ առաջիկա նիստում համակարգող խորհուրդը պետք է զբաղվի արդեն իր կանոնակարգի և մեկամյա գործունեության ծրագրի մշակման աշխատանքներով:

Համագումարը փակվեց 14:00-ին

Համագումարի նախագահություն

Նախագահ **Արտեմ Ասատրյան** /

Անդամներ **Արմեն Ալավերդյան** /

Միրա Անտոնյան /

Տիգրան Պետրոսյան /

Հավելված
Հաստատված է
02.08.2016թ.
Ազգային մակարդակում Աջակցող ցանցի
Անդրանիկ համագումարում

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՋԱԿՑՈՂ ՑԱՆՑԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Համագումարը բացում է Լիազոր մարմնի ներկայացուցիչը:

1. Համագումարը առաջին նիստում, բաց քվեարկությամբ, ընտրում է համագումարի աշխատանքային մարմիններ՝ նախագահություն, քարտուղարություն, ձայներ հաշվող՝ հաշվիչ հանձնաժողով:

1.1. Համագումարում նախագահողը և աշխատանքային մարմինների նախագահները համագումարում ունեն արտահերթ ձայնի իրավունք:

2. Համագումարի աշխատանքներին կարող են մասնակցել նաև խորհրդակցական ձայնով հրավիրյալներ, որոնք կարող են առաջարկվել Լիազոր մարմնի և Համագումարի պատվիրակների կողմից:

3. Համագումարի յուրաքանչյուր նիստից առաջ պատվիրակների հաշվառումը իրականացնում է հաշվիչ հանձնաժողովը և արդյունքները ներկայացնում համագումարին:

4. Համագումարի կողմից ընդունված օրակարգի հարցերի վերաբերյալ համագումարի որոշումներն համարվում են ընդունված, եթե քվորումի առկայության դեպքում որոշման օգտին քվերակել են համագումարի տվյալ նիստին մասնակցած պատվիարկների թվի կեսից ավելին:

4.1. Քվեարկության կարգը՝ բաց կամ փակ (գաղտնի) որոշում է համագումարը:

5. Համագումարի նախագահությունը՝

5.1. իր կազմից ընտրում է նիստերը նախագահողներին,

5.2.ապահովում սույն աշխատակարգի պահանջների կատարումը,

5.3. քննարկման է ներկայացնում օրակարգի հարցերը ըստ հերթականության,

5.4. անում է հայտարարություններ,

5.5. ապահովում է համագումարի բնականոն աշխատանքները:

6. Համագումարի նիստը նախագահողը՝

6.1. հայտարարում է նիստի աշխատանքների սկիզբը և ավարտը,

6.2. ըստ հերթականության քննարկման է ներկայացնում օրակարգի հարցերը, այդ կապակցությամբ ձայն է տալիս զեկուցողներին,

6.3. ելույթի, առաջարկությունների և հայտարարությունների համար ձայն է տալիս համագումարի պատվիրակներին և հրավիրվածներին,

6.4. անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով համագումարի նախագահության հետ, փոխում է նախապես հայտարարված ելույթների հերթականությունը համագումարի քննարկմանն է ներկայացնում առաջարկություն՝ տվյալ հարցի քննարկումը կամ նիստի աշխատանքները հետաձգելու կամ դադարեցնելու մասին,

6.5. հայտարարում է համագումարի կողմից ընդունված որոշումները:

6.6 ապահովում է վարման կարգի պահպանումը

7. Քարտուղարությունը՝

7.1. Քարտուղարության աշխատանքներն իրականացնում է Լիազոր մարմնի կողմից ձևավորված աշխատանքային խումբը, որը կոչվում է քարտուղարություն,

7.2. կազմակերպում է համագումարի ելույթների ու ընթացքի սղագրության, արձանագրության, տեսագրությանև և ձայնագրության աշխատանքները,

7.3. գրանցում է ելույթի համար հայտագրված անձանց և ըստ հերթականության ներկայացնում է նախագահությանը,

7.4. հաշվառում է արված առաջարկությունները, բանաձևերը, դիտողությունները, հայտարարությունները և դրանք ներկայացնում նախագահությանը կամ համագումարի համապատասխան աշխատանքային մարմնին,

7.5. նախագահության հանձնարարությամբ կազմակերպում է համագումարի ընթացիկ որոշումների պատճենահանումը և տրամադրումը պատվիրակներին,

7.6. ընդունում է համագումարին ընդունված գրություններ, դիմումներ, առաջարկություններ, անհրաժեշտության դեպքում համապատասխան ընթացք տալսի դրանց:

7.7 աջակցում է հրավիրված զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, նրանց է տրամադրում անհրաժեշտ նյութեր,

7.8 ներկայացնում է հայտարարությունների, բանաձևերի նախագծերը, խմբագրում է համագումարի որոշումները, այլ փաստաթղթերը և նյութերը,

8. Ձայներ հաշվող հանձնաժողովը՝ Հաշվիչ հանձնաժողով

8.1. իր կազմից ընտրում է նախագահ, նախագահի տեղակալ,

8.2. կազմակերպում է պատվիրակների ձայների հաշվառումը բաց կամ փակ (գաղտնի) քվեարկությունների ժամանակ, արդյունքների մասին զեկուցում է համագումարի նախագահությանը կամ համագումարին:

11. Աշխատանքային մարմիններ ընտրելուց հետո համագումարը քննարկում և հաստատում է համագումարի օրակարգը:

12. Համագումարի օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ լրացումների և փոփոխությունների առաջարկներով յուրաքանչյուր պատվիրակ կարող է հանդես գալ միայն մեկ անգամ: Յուրաքանչյուր առաջարկություն քվեարկության է դրվում առանձին:

13. Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առաջարկությունների, ինչպես նաև տվյալ հարցով ելույթի ցանկության մասին պատվիրակը գրավոր հայտնում է քարտուղարությանը:

13.1. Համագումարի մասնակիցները ելույթ են ունենում նախագահողից թույլտվություն ստանալուց հետո:

13.2. Ելույթների համար հատկացվում է մինչև 10 րոպե, հարցերի, առաջարկությունների համար՝ մինչև 3 րոպե:

13.3. Առանց նախագահողի թույլտվության ելույթը ընդհատվում է և չի արձանագրվում:

13.4. Ելույթ ունենալու իրավունքը կամ չօգտագործված ժամանակի փոխանցումը այլ պատվիրակի (անձի) չի թույլատրվում և հետագայում չի օգտագործվում:

14. Պատվիրակը իրավունք ունի առաջարկություն անել ելույթները սահմանափակելու մասին:

15. Օրակարգի յուրաքանչյուր հարցի կապակցությամբ ելույթները դադարեցնելուց հետո զեկուցողը կարող է հանդես գալ եզրափակիչ խոսքով, մինչև 5 րոպե տևողությամբ:

16. Համագումարի ընթացքում յուրաքանչյուր երկու ժամը մեկ անգամ հայտարարվում է ընդմիջում՝ 30 րոպե տևողությամբ:

17. Համագումարի օրակարգում ներառված զեկույցների համար համագումարը հաստատում է առանձին ժամակարգ:

18. Համագումարի պատվիրակը պարտավոր է մասնակցել համագումարի բոլոր նիստերին:

19. Համագումարում փաստաթղթերի նախագծեր կարող են ներկայացնել Համակարգող խորհուրդը և համագումարի աշխատանքային մարմինները:

20. Համագումարի փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունները կարող են գրավոր ձևով ներկայացվել համագումարի քարտուղարությանը, որը դրանք գրանցելուց հետո փոխանցում է համագումարի նախագահությանը:

21. Համագումարի փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններով հանդես եկած հեղինակին իրավունք է վերապահվում մասնակցելու այն աշխատանքային մարմնի նիստին, որտեղ քննարկվում է իր կողմից ներկայացված նախագիծը:

22. Քննարկման ներկայացվող այլ փաստաթղթերը պատվիրակների շրջանում տարածում է քարտուղարությունը:

22.1. Այն փաստաթղթերը, որոնք տարածվել են այլ ճանապարհով, համագումարի պաշտոնական փաստաթուղթ չեն համարվում և չեն քննարկվում:

23. Համագումարի փաստաթղթերի նախագծերը սկզբում ընդունվում են որպես հիմք:

24. Որպես հիմք ընդունված համագումարի փաստաթղթերի նախագծերի քննարկման ընթացքում պատվիրակների կողմից ներկայացված լրացումները դրվում են քվեարկության:

24.1. Քվեարկության կարող է դրվել ինչպես նախագծի առանձին մասը, այնպես էլ նախագիծն ամբողջությամբ:

25. Քվեարկության վերաբերյալ առաջարկություններն ընդունվում են մինչև քվեարկությունը սկսելը:

25.1. Սկսված քվեարկությունը չի ընդհատվում:

26. Պատվիրակն անձամբ է իրականացնում քվեարկության իր իրավունքը՝ «կողմ», «դեմ» կամ «ձեռնպահ» ձևով:

26.1. Քվեարկությանը չմասնակցած պատվիրակը իրավունք չունի պահանջելու անցկացնել նոր քվեարկություն:

26.2. Այն անձը, ով ֆիզիկապես չի կարողանում ինքնուրույն քվեարկել կարող է քվեարկության մասնակցել իր կամեցողությամբ այլ անձի օգնությամբ:

27. Համակարգող խորհրդի անդամների թեկնածուների գրանցումը կատարվում է քարտուղարության կողմից ըստ արված առաջարկությունների: Բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ համագումարը հաստատում է թեկնածուների ցանկը:

28. Համագումարի որոշմամբ թեկնածուները հանդես են գալիս ելույթով և պատասխանում պատվիրակների և հրավիրվածների հարցերին: Այդ նպատակով յուրաքանչյուր թեկնածուի հատկացվում է մինչև 5 րոպե:

29. Բաց քվեարկության վերջնական արդյունքները ներկայացնում է նախագահողը՝ հաշվիչ հանձնաժողովի արդյունքների հիման վրա:

30. Համակարգող խորհրդի թեկնածուներից ընրված է համարվում այն անձը, ում օգտին քվորումի առկայության դեպքում քվեարկել են նիստին մասնակցած պատվիրակների թվի կեսից ավելին:

31. Եթե առաջին քվեարկության ժամանակ քվորումի առկայության դեպքում չեն քվեարկել նիստին մասնակցած պատվիրակների թվի կեսից ավելին, քվեարկության երկրորդ փուլ են անցնում համապատասխանաբար առավել շատ թվով ձայներ հավաքած թեկնածուները:

32. Եթե երկրորդ քվեարկության դեպքում ևս չի ընտրվում համապատասխան թեկնածուներից որևէ մեկը, ապա կատարվում է նոր թեկնածուների առաջադրում (կարող են առաջադրվել նաև նույն թեկնածուները) և անցկացվում են նոր ընտրություններ՝ մինչև թեկնածուներից որևէ մեկի կողմից անհրաժեշտ թվով ձայների ստանալը:

33. Փակ (գաղտնի) քվեարկության դեպքում հաշվիչ հանձնաժողովը նախապես ստուգում և կնքում է քվեատուփը, հրապարակում է քվեարկության կարգը, քվեարկության ընդհանուր տևողությունը (սկիզբը և ավարտը), հայտարարում և կազմակերպում է քվեարկությունը:

34. Փակ (գաղտնի) քվեարկության դեպքում համագումարի հաշվիչ հանձնաժողովը ըստ առաջադրման հերթականության կազմում է թեկնածուների ցուցակը (քվեաթերթիկ), որտեղ գրվում է առաջադրված թեկնածուի կազմակերպության անվանումը և թեկնածուի անուն ազգանունը:

34.1. Հաշվիչ հանձնաժողովի անդամները ստորագրում են քվեաթերթիկների հակառակ կողմի վրա և ընդհանուր ցուցակում պատվիրակի ստորագրելուց հետո մեկական քվեաթերթիկ հանձնում են նրան:

34.2. Պատվիրակների ընդհանուր ցուցակը ձայներ հաշվող հանձնաժողովը ստանում է քարտուղարությունից:

35. Պատվիրակը քվեաթերթիկում «V» նշան է դնում այն թեկնածուի անվան դիմաց, ում օգտին նա քվեարկում է, որից հետո քվեաթերթիկը ծալած վիճակում գցում է քվեատուփի մեջ:

36. Պատվիրակը քվեարկությանը մասնակցում է անձամբ, իսկ քվեարկությանը չմասնակցելու դեպքում իր քվեաթերթիկը այլ անձի տրամադրելու իրավունք չունի:

36.1. Պատվիրակը հանձնաժողովի կողմից քվեարկության համար սահմանված ժամկետից դուրս քվեարկելու իրավունք չունի:

37. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե

37.1. քվեաթերթիկում «V» նշան է դրվել մեկից ավելի թեկնածուի անվան դիմաց,

37.2. քվեաթերթիկում առկա են ավելորդ նշումներ,

37.3. ջնջված է թեկուզ մեկ թեկնածուի անունը,

37.4. քվեաթերթիկի հակառակ կողմում բացակայում է հաշվիչ հանձնաժողովի առնվազն մեկ անդամի ստորագրությունը,

37.5. կատարված է սույն աշխատակարգի 37 կետով սահմանված նշումից տարբերվող այլ նշում:

38. Քվեարկությունը ավարտելուց հետո ձայներ հաշվող հանձնաժողովը բացում է քվեատուփը, հաշվում է քվեարկության արդյունքները, այդ մասին կազմում ձայներ հաշվող հանձնաժողովի նիստի արձանագրությունը և ներկայացնում համագումարի հաստատմանը:

39.Նախագահողի կողմից համագումարի աշխատանքները հայտարարվում են ավարտված, եթե համապատասխան որոշումներ են ընդունվել օրակարգի բոլոր հարցերի վերաբերյալ:

40. Համագումարը հրավիրվում է տարեկան 2 անգամ: